



Արմենիա
Ինչուրանս

«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ»
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ Գլխավոր տնօրենի
«03» դեկտեմբերի 2025 թ. թիվ 465-25Լ հրամանով

«ԱՊՊԱ-ԿԱՍԿՈ» ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Ապահովադիր

Ապահովադիր կարող է հանդիսանալ ավտոտրանսպորտային միջոցի սեփականատեր հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը, ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով վարձակալը, Հայաստանի Հանրապետության տարածք վարելու միջոցով ներմուծվող ավտոտրանսպորտային միջոցները ներմուծող անձը՝ անկախ տվյալ ավտոտրանսպորտային միջոցի սեփականատեր համարվելու փաստից:

Ապահովագրության օբյեկտ

Ապահովագրության օբյեկտ կարող է հանդիսանալ 2000թ. և բարձր արտադրության մարդաշար մեքենան, որի սեփականատիրոջ ԲՄ դասը 1-18 է:

Ապահովագրության օբյեկտ չի կարող հանդիսանալ այն տրանսպորտային միջոցը, որը շահագործվում է որպես տաքսի (ներառյալ ինտերնետային հավելվածներով գործունեություն ծավալող մեքենան) կամ հանրային տրանսպորտ:

Ապահովագրական պատահար

Ապահովագրական պատահար է համարվում ապահովագրության պայմանագրում նշված տարածքում և ժամկետում ավտոտրանսպորտային միջոցի ֆիզիկական վնասվելը, որը *այլ տրանսպորտային միջոցի* հետ բախվելու հետևանք է և պատահարին մասնակից բոլոր տրանսպորտային միջոցների շահագործողները (վարորդներ) հայտնի են:

Ապահովագրության տարածք

Հայաստանի Հանրապետություն:

Ապահովագրության ժամկետ

Ապահովագրության պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքմանը հաջորդող 5-րդ օրը և գործում է 1 տարի ժամկետով:

Ապահովագրական գումար, ապահովագրավճար

Շահագործման նպատակ	Ապահովագրական գումար (ՀՀ դրամ)	Ապահովագրավճար (ՀՀ դրամ)
Անձնական	1 800 000	Տվյալ տրանսպորտային միջոցի ԱՊՊԱ վճարի 1,7-պատիկը (ԱՊՊԱ վճար x 1,7)
Վարձակալություն, առևտրային, ծառայողական	1 800 000	Տվյալ տրանսպորտային միջոցի ԱՊՊԱ վճարի եռապատիկը (ԱՊՊԱ վճար x 3)

Լրացուցիչ պայման

Անձնական օգտագործման նպատակով շահագործվող նույն տրանսպորտային միջոցի համար «Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ-ից մեկ տարով միաժամանակ ԱՊՊԱ և ԱՊՊԱ-ԿԱՍԿՈ ապահովագրություն ձեռքբերման դեպքում, ԱՊՊԱ-ԿԱՍԿՈ-ի ապահովագրավճարի չափը գնման պահին կազմում է տվյալ տրանսպորտային միջոցի ԱՊՊԱ վճարի 1,5-պատիկը (ԱՊՊԱ վճար x 1,5):

Դադարեցման կարգ

Համաձայն ծրագրի, տարաժամկետ վճարման դեպքում՝ հետ վերադարձվող գումարը պետք է հավասար լինի ապահովագրի կողմից դեռևս չվճարված ապահովագրավճարի գումարին, որը հաշվանցելով՝ տվյալ պայմանագրի գծով պարտավորություն չի առաջանա:

Դադարեցման հիմք է հերթական վճարումը 5 օր ուշացնելը, ընդ որում՝ ապահովագրի հերթական վճարման օրվանից 5 օր առաջ sms հաղորդագրությամբ ծանուցվելու է վճարման մասին, իսկ չվճարելու դեպքում նորից sms հաղորդագրությամբ՝ ծանուցվելու է դադարեցման մասին:

Ապահովագրի (վարորդի) գործողությունները պատահար տեղի ունենալու դեպքում

- Չտեղաշարժել ավտոտրանսպորտային միջոցը կամ պատահարի հետ կապ ունեցող առարկաները

- Չլքել ՃՏՊ-ի վայրը մինչև ՃՈ և Ապահովագրական ընկերության աշխատակիցների ժամանումը
- Ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցառումները վնասները կանխելու կամ նվազեցնելու նպատակով
- Չընդունել որևէ պատասխանատվություն:

Տեղի ունեցած պատահարից հետո անհապաղ՝ ոչ ուշ քան 40 րոպեի ընթացքում, Ապահովագրության պայմանագրում նշված հեռախոսահամարներով տեղեկացնել Ապահովագրողին: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ Ապահովադիրը կամ վարորդը պատահարի արդյունքում գտնվել է անգիտակից վիճակում: Անհնարին դարձնող հանգամանքների վերացման դեպքում Ապահովադիրը կամ վարորդը պարտավոր է անհապաղ՝ ոչ ուշ քան 40 րոպեի ընթացքում, Ապահովագրության պայմանագրում նշված հեռախոսահամարներով տեղեկացնել Ապահովագրողին պատահարի մասին:

Ապահովագրական հատուցում

Ապահովագրողն ապահովագրական պատահարի մասին բոլոր անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուն հաջորդող օրվանից՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, որոշում է կայացնում ապահովագրական հատուցում վճարելու կամ ապահովագրական հատուցման վճարումը մերժելու մասին:

Այլ պայմաններ

- Ոչ պայմանական չհատուցվող գումար չի կիրառվում
- Ապահովագրավճարը վճարվում է միանվագ կամ տարաժամկետ
- Ապահովագրության բոլոր այն պայմանները, որոնց առանձնահատկությունները որոշված չեն ծրագրով, որոշվում են «Ցամաքային տրանսպորտի կամավոր ապահովագրության» կանոններով